



Ա Ր Ա Ր Ա Տ

Թ Ի Ի Է . — Շ Ր Զ Ա Ն Ի Գ . 1891 Տ Ա Ր Ի Ի Գ . Յ Ո Ի Լ Ի Ս

Կ Ր Օ Ն Ա Կ Ա Ն

Յ Ի Ս Ո Ւ Ս Գ Ր Ի Ս Տ Ո Ս Թ Ա Գ Ե Ի Ո Ր Ե Կ Ե Ն Ա Ր Ժ Ա Ն Ի Բ Ը

Պ Ա Տ Ա Ս Ի Ը Ն Է Թ Է Ն Ա Ն Ի Ն Ե Ի Լ Տ Օ Լ Ս Տ Օ Յ Ի Ն

Բ Ե Բ Ս Ա Է Ի Գ Ե Բ Ո Զ Ն Ե Բ Ի Յ 1)

Ա ս է ց ն ա Պ ր զ ա տ տ ւ Ո ր ա ս ց ր յ է ս կ ց է թ ա գ աւ օր ո մ ն ե ս դ ու ՝
 Պ ա տ ա ս ր ա ն հ ե ա Յ ի ս ու լ ա ՝ դ ու ա տ ե ս թ է թ ա գ աւ օր կ ց ե մ ՝
 (Յ ու ՝ Ժ Ը ՝ 37) :

Պ ա տ ա մ ու թ ի խ ն ր չ է ս ց ա չ ե կ մ ե գ Հ ա մ մ ար մ ի ու ր ի շ ա ռ աւ ե կ որ ա մ ն յ ե ի ի
 տ ր ա մ ա խ ս ու ա թ ի խ ն ՝ ք ա ն այ ս Հ ա կ ի ր ը ՝ բ այ ց խ ար չ ր գ աւ օր խ օ ս ր ե ր ր ՝

1) Փրանսիացի աստուածաբան քարոզչի անունը, որ եւրոպական հըռ-
 շակ է վայելում: անյայտ չէ մեր ընթերցողներին.

որ աւագ ուրբաթ օրը Երուսաղէմում հռոմէական դատաւորի ապարանում ասել էին միմեանց պօնտացի Պիղատոսն և Յիսուս Քրիստոսը:

Նախախնամութեան հաճոյ էր եղել, որ պատմական այդ խորհրդաւոր օրին՝ դէմ յանդիման կանգնէին երկու զօրութիւններ. — մի կողմից՝ ներկայացուցիչն և այն խորոխ ոյժի, որի նմանը հազիւ թէ երբ և իցէ ծանրացած էր երկրի վրայ՝ — Հռոմէական ահարկու կայսերութեան փոխ-հիւպատոսը՝ միւս կողմից՝ նախասինքից կորացած և տանջանքներից տկարացած՝ այն եղկելի Գալիլիացին, որին անուանում էին Յիսուս Նազուրեցի: Երկու արքայական ոյժեր, որոց մինը իշխում է երևելի իրերի, միւսը՝ հոգևոր առարկայների վրայ: Մինը տիրում է երկրին, միւսը՝ հոգուն. մինը ներկայ բոլորի զօրութիւն է, միւսին պատկանում են ապագայն և յաւիտենականութիւնը:

Մենք կամենում ենք Աստուծոյ օգնութեամբ քննել Յիսուսի

Եւջրի առջ ունենալով որ ներկայ քարոզի բովանդակութիւնն անմիջապէս ուղղուած է այն մոլար, ու հակակեղեցական վարդապետութեան դէմ, որ վերջին ժամանակներում սաստկութեամբ ու արագութեամբ տարածուում է Ռուսիոյ գասակարգերի բոլոր շերտերի մէջ կոմս Լ. Տօլստոյի անուան կախարդանքի ոյժով և պարբերական մամուլի թեթևամիտ եռանդով, կարծում ենք՝ որ ամեն խոհական մարդ կը գնահատէ ներկայ քարոզի թարգմանութեան անհրաժեշտ կարևորութիւնը, Այդ քարոզը արդէն թարգմանուած է ռուսերէն (Пров. 0603p. 1889 г. Апр. 14.) և հոգևոր պարբերական մամուլը մատենախօսական տեսութեան մէջ ըստ արժանոյն գնահատել է այդ թարգմանութեան նշանակութիւնը, Արօնական տատանմունքի մէջ գտնուող մտքի համար աւելորդ չէ, ընդհակառակը շատ օգտակար՝ և թէ մտադիւր հաճութեամբ ունկնդիր լինի համոզեալ քարոզիչի կշռագատութիւններին, մանաւանդ, որ նորա ոճն, ինչպէս բոլոր քարոզների մէջ, այնպէս էլ այստեղ կենդանի է, պայծառ և ամենքի համար դիւրըմբռնելի: Audiatur et altera pars! Լ. Տօլստոյի և նմանեաց վարդապետութիւններով յափշտակուած անձինք՝ կարծում ենք, տակաւին յափշտակութեան այն ատիժանին հասած չեն, որ այս իմաստուն կանոնի պարտաւորիչ լինելն էլ ուրանան:

Հուլիսի դատաւորին տուած պատասխանը: Մենք այս բոլէիս կը բանանք՝ թէ ի՞նչ իմաստ ունէր այն իրաւախնդրութիւնն, որ Յիսուս Քրիստոս յայտնուէր «թագաւոր իցեմ» պատասխանով:

Յետոյ կը տեսնենք՝ թէ ինչպէս իրագործուեց այս իրաւախնդրութիւնը դարերի ընթացքում և ինչպէս այժմ իրագործուում է:

Մի կարգ ազնուամիտ մարդիկ որոնք ջանք են անում քրիստոնէաբար ապրելու և որոնց անկեղծութիւնը ամենեւին մեր մէջ կատարած չէ յարուցանում, կարծում են թէ՛ կարող են քրիստոնէութիւնը ժամանակակից մարդկանց համար աւելի դիւրբանելի դարձնել, եթէ կարողանան այդ ուսումը պարփակել պատմական իրողութեան սահմանների մէջ, այսինքն՝ ընդունել սոսկ որպէս արգասիք մարդկութեան կրօնական զգացմանքի: Նրանց ատելով՝ Յիսուս Քրիստոսի պատկերը այնքան առաւել կը գրաւէր մարդկանց յարգութեամբ համակրութիւնը, որքան նա սակաւ ներկայանար մեզ գերբնական ծագումի ու զօրութեան փայլով:

«Թողէ՛ք» ասում են նորա՝ այդ հրաշապատում՝ զոյցները, որոնց հետ իւր հաշիւն արդէն վերջացրել է արդի նորագոյն քննադատութիւնը, և որոնք վերջապէս բոլորովին հակասում են մեր մտքին, որ կրթուել է դրական գիտութիւնների խիստ մէթոդով: Մի ներկայացրէք այլ ևս Յիսուս Քրիստոսին այնպէս, ինչպէս նա ձեզ երևում է, այսինքն այն կերպարանքով՝ որով պատկերացրել է Նրան Նորա աշակերտների յափշտակութիւնը. — իբր յարուցեալ համբարձեալ յերկինս, նստեալ ընդ աջմէ՛ Հօր և երկրպագութեան առարկայ՝ որ վայել է միմիայն Աստուծուն: Եւ դուք իսկապէս ի՞նչ կը կորցնէք, այսպէս վարուելով: Քրիստոսին կը մնայ էլի ամենամեծ մարգարէի, բանականութեան կրօնի քարոզի, Աստուածային արքայութեան և մարդկային եղբայրութեան աւետարանի միակ փառքը: Միայնակ մնացած մարդու որդոց մէջ, Նա զգացել է, որ իւր սրտումը բորբոքւում է աստուածային որդեգրութեան հաւատով: Նա տուել է Աստուծուն Նրա յատուկ անունը՝ — Հայր: Նա հաստատեց Աստուծոյ ու մարդու մէջ այն ճշմարիտ յարաբերութիւնն, որ արծարծում է մեր հոգու մէջ անձնանուէր հաւատ ու սէր: Ահա թէ ի՞նչ պատ-

ճառով Նա մեզ համար միշտ է և կը լինի ուսուցիչ և օրինակ: «Նրանութեան» մասին Նրա քարոզած սքանչելի վարդապետութեան, Նրա վսեմ առակների և վերջապէս իւր չարչարանքների ու մահուան փառաւոր հանդէսի մէջ Նա ցոյց կը տայ մեզ թէ ինչ է մարդկային կեանքն, եթէ դա համակուած է աստուածային սիրով, և այս օրինակը այն չափով աւելի հրապուրիչ կը լինի մեզ համար, որ չափով, որ մեզ ճշմարիտ եղբայր դարձած Քրիստոսը սակաւ կերևի մեզ առասպելական դրոյցների շլացուցիչ փայլով, և որքան որ մենք աւաւել Նրա մէջ կը տեսնենք Մարդու Որդի, որ կրում է իւր մէջ այն ձգտումներն, ինչ որ տածում ենք մենք մեր մէջ, և իւր բարձր բարոյական առաքինութիւններով ժառանգում է Աստուծու որդու անունը և արժանաւորութիւնը»:

Այսպիսի են, եղբայր, այն դատողութիւններն, որ մենք ամենքըս լսում ենք՝ և որ, բոլորովին անկեղծ մարդոց բերանով յայտնած լինելով, մեզ համար էլ անհետք չէ անցնում, սրովհետև այնպիսի շփոթեալ ժամանակներում, ինչպիսին մեր արդի ժամանակն է, երբ այնքան բազմաթիւ մարդիկ սառն արհամարհանքով երես են դարձնում յաւիտենական յայտից, հարկաւ մի կշիռ և այն մեծ կշիռ ունի, որ ճանաչում են Քրիստոսին իբրև վարդապետ կրօնական ճշմարտութեան: Այդ պատճառով այգպէս դատողներին մենք չենք պատասխանիլ ինքնաբաւական սճով և խրատիչ հաստատութեամբ այն ուղղափառութեան, որ ինքն իրան անսխալական է համարում: Սակայն բոլորեքեան կը համաձայնեն թէ՛ մենք ամենևին կոյր կը լինէինք, եթէ չըմբռնէինք ահագին նշանակութիւնն այն գիջողութիւնների, որ մեզանից պահանջում են բանականութեան կրօնի արբանեակները: Կսկսպէս խնդիրն այն է, որ խնայուի թէ՛ արդեօք քրիստոնէութիւնը աստուածային պարզե է՛ մարդկութեան ի վերուստ շնորհուած, թէ՛ մարդկային խղճի գերազոյն արտադրութիւնն է: Փոխանակ բոլոր եկեղեցու հետ Յիսուս Քրիստոսի մէջ տեսնելու աստուածութիւն, որ իջել է երկնքից մարդու կերպարանքով, մեզ առաջարկում են տեսնել Նորա մէջ աստուածայեալ մարդկութիւն, սրովհետև նոյա ասելով առաջին անգամ Նորա մէջ է յայտնուած մարդկայ-

նութիւնը, աստուածութեան կատարեալ տիրապետութեամբ:

Նորա կարծում են, թէ այդ գնով կարող են փրկել քրիստոնէութիւնը. մենք կը պատասխանենք նրանց խորին համոզմունքի դօրութեամբ, նախ՝ որ նոցա ճարտարամտօրէն անչափ մեծ է. երկրորդ՝ որ նրանց Յիսուս Քրիստոսը, որ պարփակուած է զուտ մարդկային ըմբռնողութեան սահմանների մէջ, առաւել անհասկանալի էակ է, քան մերն, որին նորա հերքում են:

Ես ասացի նոցա ճարտարամտօրէն և ես կը բացատրեմ այդ: Արդարեւ նոցա խօսքն ու հաւատը չէ՞ արդեօք, թէ Աւետարանը եթէ մաքրուի բոլոր գերբնական տարրերից և վերագաւանայ մեզ բարոյական կեանքի պարզ գծերով, ինչպէս գծագրուած է երանութեանց վարդապետութեան մէջ՝ այնուհետև նա աւելի կը գրաւէ մարդուս խիղճն և այլ ևս չի յարուցանիլ իւր գէժ՝ բանականութեան վրդովմունքը:

Եթէ այդպէս է՝ ես դառնում եմ իմ ունկնդիրներին, որոնք պնդում են ժամանակակից մտքի շարժման ընթացքն: Ազդի՞ղ է արդեօք, որ այդպէս գաւառացիների ակնկալութիւնը կատարուած է գոնէ մի սրտը չափով: Ա՛ւր են այն նորահաւատներն, որոնք հրէնազանդուելիս լինէին նորաբարոյ Աւետարանին: Ա՛ւր են այն մտածողներն, որոնց նա բաւականութիւն տար այն բանում, որ դասուած է նոցա կրքերն և խաղաղութիւն է պարգևուած նոցա մտքին:

Այդ ես չեմ նկատում. բայց ակներև տեսնում եմ, որ ներկայ ժամանակում աւելի խտուութեամբ և արհամարհանքով յարձակուում են նոյն իսկ այն աշխարհայեցողութեան վրայ, որի գերագոյն արտայայտութիւնը երանութեան հանրամտուչելի վարդապետութիւնն է ¹⁾: Հարցրէք մեր գրականներին (պողիտիլիստ): Ի հարկէ իմ խօսքը նոցա մասին չէ, որոնք գիտութեան խորշերում անողորբելի սրամաքանութեամբ մակարերում են իրանց հե-

1) Երանութեան վարդապետութիւն ասելով անշուշտ ընթերցողը հասկանում է, որ մեր խօսքը այն սքանչելի ուսման մասին է, որ Յիսուս սփրի վերայ քարոզել էր Իւր աշակերտներին (Մատ. Ե., 9. և Է.):

տեւած սիստեմի եղբակացութիւնները, իմ ակնարկը վերաբերում է ռամկալար ճառախօսներին, որոնցից անցեալներում մի ճառ լսեցի որ բուռն ծափահարութեամբ ընդունելութիւն գտաւ ֆարիզի բանւորների կողմից: Հարցրեցէք նրանց թէ ի՞նչ են մըտածում Աստուածային Նախախնամութեան մասին, որ կերակրում է երկնքի թռչուններին, զարդարում է գաշտի շուշանն որ համարած ունի մեր գլխի մազերն և որին պիտի ազօթէ մեր մանկական սիրտը սուրբ հաւատով: Հարցրեցէք նրանց՝ թէ ի՞նչ կարծիք ունին նրանք երանականութեան մասին: Հարցրէք նրանց այդ նոր առաքեալներին, որոնք քարոզում են թէ մարդկային փրկութիւնը մակացութեան միջնորդութեամբ է, ի՞նչպէս նայում են նորա հոգով ազբասներին տուած խոստման վրայ, հարցրեցէք այդ քաղաքագէտներին՝ թէ՛ ի՞նչ հայեացք ունին նորայն յաղթանակի վրայ, որ խոստացուում է հեղերին: Հարցրեցէք այդ հասարակալարական յեղափոխիչներին՝ թէ ի՞նչպիսի վճիռ կտան իրանք այն մշանջենական վարձի մասին, որ խոստացուած է ճշմարտութեան համար անարդուածներին ու հալածուածներին. — և երբ գուք կը ժողովէք նրանց բարկութեամբ ու արհամարհանքով սողորուած պատասխաններն, եկէք և ասացէք ինձ թէ՛ արդեօք բաւական է ազատուել խաչի յիմարութիւնից և գերբնական քրիստոնէութիւնից, որպէս զի ապագայ սերունդները ենթարկուին Աւետարանին:

Բայց ես իրաւունք ունիմ ասելու, որ նոցա մտադասարանքն, որ ես հերքում եմ շատ խորն է: Ես մինչև անգամ աւերացնում եմ թէ՛ նոցա Քրիստոսն, որ առաջարկում են մեզ երևակայական Քրիստոս է, որին պատմութիւնը չէ ճանաչուած: Երբ որ կամենում են իմանալ՝ ո՞վ էր Քրիստոսը՝ հարկաւոր է ամենից առաջ հարցնել նոյն իսկ իրան Քրիստոսին: Լսենք ուրեմն Նորա վկայութիւնը՝ զարձնենք Նրա վրայ մեր ուշադրութիւնն և որպէս զի աներկմիտ լինինք, որ մենք անձնատուր չենք Նորա աշակերտների յափշտակութեան, մենք՝ եթէ կամենում էք, չենք հարցնիլ ոչ Պօղոս առաքեալին. — թէ և սորա թղթերը անվիճելի ստուգութիւն ունենալով՝ սկզբնական քրիստոնէութեան պատմական հա-

ւաստիքն են,— և ոչ Ս. Յովհաննէսին կամ Նորա աշակերտներին, որոնց խորհրդաբանական (միաստիքական) արամադրութիւնը, ասում են՝ իբր թէ իդէալացրել է Քրիստոսին.— Այ՛, մենք սրանց կը թողնենք. մենք կը հետևենք առաջին երեք Աւետարանիչներին, որոնք խսկասիւղ արձագանք են Քրիստոսի քարոզութեան՝ Վալիլիայում, և Նորա խաչաչարչար մահուան՝ Լքուտաղէմում: Գուք այս ամենը ճանաչել էք սրտով և ես գիմում եմ՝ հէնց այս սկզբնական տպաւորութեան, որ տակաւին յեղաթիւրած չէ ոչ մի քննական վերլուծութիւն:

Ուղիղ է՝ արդեօք, որ Քրիստոսը, ինչպէս նկարագրուած է առաջին երեք աւետարանական պատմութեանց մէջ, ոչ այլ ինչ է, եթէ ոչ մի հէզ Նորայէլացի, որ իբր թէ բարոյական մաքաւմունքներով և հին մարգարէներին ուսումնասիրելով հասած է այն վիճակին, որ սկսել է զգալ թէ Նորա սրտում բորբոքում է աստուածային որդեգրութեան և մարդկային եղբայրութեան հաւաստիքը, և իւր հանձարի անքուն տքնութեամբ պարզում է այն մեծախառ երևոյթն, որ կոչուում է Աստուածային Արքայութիւն: Ես չեմ նախատեսում ձեր պատասխանը, սակայն ահա իմն. ՚Իմ հսցեացքով՝ ինչպէս Մասթէոսի, Մարկոսի և Ղուկասի Քրիստոսը, այնպէս էլ Յովհաննու և Պօղոսի Քրիստոսը այն էակն է, որ իւր յայտնուելու օրից խօսում է ու գործում է արքայաբար: Այս է, որ ես կամենում եմ ցոյց տալ:

Սահմանենք մեր առարկան: Այն շրջանն, որտեղ ներգործում է Յիսուս Քրիստոս,—բացառաբար կրօնական է: Ամեն գէտքում գործում է թէ քարոզում է՝ նա զբաղուած է միայն մարդու առ Աստուած և առ ընկերն ունեցած յարաբերութիւնները պարզելով: Նա չէ շօշափում ոչ ընկերալարական և ոչ քաղաքական հարցերը: Նա երբէք չէ խոսնուում ոչ երկրաւոր ու անցաւոր առարկաների և ոչ էլ մտկացական ճշմարտութիւնների մէջ, որոնք բոլորը նա թողնում է մարդու ազատ խուզարկութեան: Եւ այս (հարեանցի կեդրով ասում եմ) նորա համար է, որովհետև Աւետարանը ոչինչ գաշն չէ կռել այդ կարգի ոյժերի հետ և ամենեւին չէ կաշկանդել իրան ոչ մի տեսակ ընկերալարական—քա՛

ղաքական գրութեան, կամ մի որ և իցէ տիեզերախօսական և փիլիսոփայական վարդապետութեան հետ: Նա միայն ցոյց է տուել, թէ մարդը ինքն իւր անձի տէրն է այն բաներում, որ նրա համար խորին ու էական կարևորութիւն ունի, և թէ ինքն. Աւետարանը կարող է յարմարուել ամեն ժամանակի և ամեն ազգերին—նա համաշխարհական է և միշտ գործող: Սակայն երբ ես ասում եմ, թէ Յիսուս Քրիստոս թագաւորութեան իրաւախնդիր ունէր. իմ խօսքս ոչ ժամանակաւոր կարգերի թագաւորութեան մասին է և ոչ էլ մտաւոր գրութիւնների իշխանակոչութեան վերայ է: Հարկաւոր է, ինչպէս ասում է Պասկալը՝ խոյանալ աւելի վեր աւելի բարձր, քան թէ Ազգքաանդրների ու Արքիմեդների իշխած ոլորտն է, և սաւառնել բարոյական ու կրօնական եթերի մէջ: Ահա թէ սրտեղ Քրիստոսը ներկայանում է ինձ թագաւոր:

Նա թագաւոր է այն ձևերի մէջ, որով վարդապետում է իւր ուսումն, որով դատում է խիղճը, որով զինքը սրտերի վրայ իշխան է կարգում: և վերջապէս Նա թագաւորում է գերբնական զօրութեան արտայայտութիւնների մէջ: Այս չորս կողմից մենք կուսումնասիրենք Նրան:

Ա.

Նախ և աւաջ լսենք Նորան, երբ Նա ուսուցանում է: Համեմատեցէք Նորա գրութիւնը ամենամեծ փիլիսոփաների, օրինակ, Սոկրատեսի գրութեան հետ: Յայտնի է յ. յ. Աուսօի արած հաշակաւոր համեմատութիւնը Սոկրատեսի ու Քրիստոսի մէջ: Միմիայն մի կէտում այդ համեմատութիւնը սխալ է: Նազովրեցի Յիսուսի մահն իբրև թէ Աթենացի իմաստասէրի մահից աւելի անխառն չէր: Մահուան տագնապի մասին խօսք բանալու տեղ չէր Գողգոթայի խաչի աւաջ, երբ նորա վերայ որսաւցել էր մեռնող Փրկչի աղաղակը՝ էլի, էլի. լամն ստիակտանի»: Համարձակուում եմ մինչև անգամ ասել, որ Յիսուս Քրիստոսի մահը լի էր նուազմամբ: Սակայն այդ նուազումը հաւատացեալների համար գարձաւ մշտնջենական ալքիւր անապու խաղաղութեան: Այս տեսակէ-

տից ժ. ժ. Ռուսոսի արած համեմատութիւնը անընդունելի է: Միայն ինչ որ վերաբերում է Սոկրատեսի ուսման և Քրիստոսի քարայրութեան — սրբան սրանչելի է այդ համեմատութիւնն:

Սոկրատէսը մարդ էր, որ ճանաչել է իւր տգիտութեան չափը և որ արդար խղճի ու բարի զգացման անկեղծութեամբ հանճար ստանալով ջանք է անում գտնել իւր կոչման օրէնքները:

Ի՞նչ է անում նա այս բանի համար:

Նա զննում է, վերլուծում է մարդկային գործողութիւններն և նրանց շարժող զսպանակները: Կանստակների մտատեսութեանց ազդեցութեան տակ նա որոնում է բարոյական օրէնքներն և ժողովում է այն նիւթերն, որոնց վրայ նորա Պլատոն աշակերտի կարող հանճարը հիմնում է մի զարմանալի փիլիսոփայական յօրինուած, սիստեմա, որը թէև լի է ճարտար ենթագրութիւններով, սրամիտ ստորատեսութիւններով և երևակայութեան նորանշան պատկերներով այսու հանդերձ այդ հանճարեղ յօրինուածը — փիլիսոփայութիւնն ոչ այլ ինչ է, եթէ ոչ միայն վերին արտադրութիւն մարդկային բանասիրութեան, որ ջանք է անում ըմբռնել անսահմաններին:

Սոկրատից յետոյ լսեցէք Յիսուս Քրիստոսին: Ո՛ւր է Նորա մէջ քննող բանականութեան տքնութիւնը: Նորա ո՞ր քարոզի մէջ դուք նկատում էք մտքի աշխատութեան հետքեր — մտքի՞ որ ճրգտում լինէր ճշմարտութեան հասնել: Ո՛ւր են տատանմունքը, ենթագրութիւններն, երկբայութիւնների տակ նուազիւն, որոնք վարական են մարդու համար՝ խորին համոզմունքների յղութեան ժամանակ, և որոնք տաքնատարում են միտքը մինչև անգամ այդ համոզմունքների զօրութեան նկատմամբ: Յիսուս Քրիստոսը հէնց առաջին խօսքերում հաստատում է, երբէք Նորա խօսքը չէ բարձրանում երկրի վերայ՝ որպէս գերազոյն արտադրութիւն անարատ հոգու աշխատութեան: Նա միշտ երկնքից վայր է իջնում յայսնութեան հեղինակութիւնով: Նոյն իսկ հեղինակութեան այս սճն ապշեցրեց երանութեան քարոզի լերան վրայ աշակերտների խումբն և այդ սճն է, որ դարերի ընթացքում մնում է իբրև Նորա իշխող յատկանիշը:

ինչ որ վերաբերում է Աստուծուն, Նորա բնութեան, Նորա արբութեան, մարդասիրութեան, ճշմարիտ պաշտաման, որ մարդիկ պարտ են Նորան մատուցանել: Ինչ որ վերաբերում է մարդուն, նորա հոգու մշտական արժէքին, ներքին ու հոգևոր հասանդութեան, արգարութեան ու սիրոյ օրէնքներին, որ սխալ շողկապէ միմեանց հետ բոլոր էակներին, և վերջապէս ինչ որ վերաբերում է հանգերձեալ կեանքին և վերջին հատուցման, — այս բոլոր առարկաների մասին Յիսուս Քրիստոս խօսում է ուսուցչի ոճով և դոցանից ամեն մէկի վերաբերմամբ տալիս է այնպիսի ճշմարիտ ու որոշ վճիռ, որ արձագանք է գտնում մարդկային խղճի ամենախորին խորքերում՝ ամեն ժամանակ, ամեն ազգերի մէջ և երկրագնտիս ամեն մի կէտի վրայ:

Կասկած չը կայ, որ մեզ կը պատասխանեն թէ՛ Նարայէլի Արդուբերնում այդ տեսակ հեղինակական ոճը մի օտար բան չէր և թէ՛ չէ կարելի պահանջել ոչ փիլիսոփայական ճառ և ոչ տրամախօսական վերածանցութիւններ այն ցեղից, որ բացառապէս դաստիարակուած էր օրէնքի ու մարգարէների ազդեցութեան ներքոյ: Ընդունենք թէ այդ դիտողութիւնը հիմնաւոր է, և համեմատենք Յիսուս Քրիստոսին՝ երբ Նա ուսուցանում է, ոչ թէ Հելլենացիներից ամենամեծի հետ, այլ Նարայէլի մի ուրիշ որդու հետ, որին մենք քրիստոնեաներս համարում ենք հոգեշունչ, և որ ինքն էլ անսահման եռանդով հաւատում էր իւր հոգեշնչութեան. — օրէնքի ու մարգարէների այս նախանձախնդիր աշակերտի հետ, որ կոչուում էր Սօղոս Տարսոնացի:

Եթէ եղել է երբ և իցէ մի մարդ, որ խորին ու անսասան համոզմունք է ունեցել իւր աստուածային կոչման մասին և իւր հաւատի պաշտաման մէջ դրել է մի հրատապ ու անքիժ հոգի՝ — դա Տարսոնացի Սօղոսն է: Նորա գործունէութիւնն այնչափ մեծ էր, որ վերջերումն ոմանք մինչև անգամ աշխատում էին յատկացնել Նորան մի փառք — որ Նորա աչքում աններելի հայհոյութիւն էր՝ — այն է՝ քրիստոնէութեան իսկական Հիմնադրի փառքը: Բայց երբ որ կամենում են համեմատել Նորան իւր Աւսուցչի հետ՝ թող չափեն այն տարածութիւնն, որ բաժանում է մէկին միւսից: Մի ծայրում

կանգնած է Նա, որ Տէրն է ճշմարտութեան, այնպէս որ կարող է ասել՝ «Ես եմ ճշմարտութիւն»։ միւս ծայրում կանգնած է Նա, որի վրայ իշխում է ճշմարտութիւնը և իշխում է այնպէս, որ կարող էր դառնալ Նորա ամենաեռանդուն առաքեալը:

Այն, չէնց այս առաքեալի մէջ կարող ենք ուսումնասիրել այն ներքին տքնութիւնը, մաքառումը, նուազումը և հոգեւոր եղերերգութիւնն, որ իզուր որոնում եմ Յիսուս Քրիստոսի մէջ: Կարգացէք Նորա թղթերն, որոնց ոճի ինքնուրոյնութիւնն, ենթակայականութիւնն և խանդը ամենևին երաշխաւորում են նոցա հարազատ լինելը: Նայելով նոցա անհարթ գողգոթուն և բազմիցս ոչ կանոնաւոր ոճին, անմշակ նախագասութիւններին, և վերջապէս իմատոների շարայարութեան, որ կարծես զօղանջում է խոկ և խոկ որպէս մի անօթ, որ չէ կարողանում պահել նոր գինին, եռում է և գուրս է թափուում:— Ես ճշմարիտ է՝ զգում եմ մի աստուածաշունչ հագի, բայց ամենքից առաջ զգում եմ մարդու հոգի, որ ճիգն է դնում հաղորդել իւր լեզուով Աստուածութեան մեծ գործերը: Հարկաւ ես խոնարհում եմ առաքեալի առաջ և նորա խօսքերի մէջ ընդունում եմ Աւետարանի հաւատի վկայի գրութիւնը, բայց միևնոյն ժամանակ նոյն խոկ առաքեալի հետ ես ծուր եմ դնում Նորա առաջ, Որին ինքը Պօղոսը կոչում է Տէր և Վարդապետ. Նորա առաջ, որ հին ստուերական օրէնքին գէմ դնում է իւր հեղինակութիւնն և որ երկնքի մասին խօսում է այնպէս, ինչպէս Որդին կարող էր խօսել իւր հօր տան վրայ, որ ասում է՝ Այ՛ս որ ճանաչէ զչայր, եթէ ոչ Որդին, որ հաստատում է թէ՛ երկնքն և երկիրը կանցնեն, բայց Նորա խօսքը չի անցնիլ. վերջապէս ես ծուր եմ դնում Նորա առաջ, որ կրօնական Յայանութեան որրաներում խօսում է և ներգործում է արքայաբար:

Բ.

Արքայական սարանն, որով խոկ ապշեցնում է Յիսուս Քրիստոսը՝ կրօնական ճշմարտութիւնները բացատրելու ժամանակ, ես տեսնում եմ այն գրութեան մէջ, որ բռնած ունի Նա խղճի հանդէպ, որոյ Նշխան և Օրէնսդիր է Իրան հրատարակում:

Փոքր ինչ նայեցէք այս տեսակէտից իմ հերքած առարկութեան

վրայ: Մեզ ասում են թէ՛ Յիսուս Գալիլիայի սոսկ սրգին՝ ներքին մաքառման ու տրնութեան միջոցով՝ աստիճանաբար ձեռք է բերել ներքին խաղաղութիւն և կրօնական ճշմարտութիւն, որոյ աւետարանին էր, վկայն ու նահատակը: Մեզ ասում են, որ եթէ նայենք Նորա վերայ այս տեսակէտից, աւանց կանխակալ կարծիքի Նորա գերբնականութեան մասին, այն ժամանակ աւելի լաւ կարելի է հասկանալ Նորան և սիրել:

Այստեղ ևս հարցնենք նոյն իսկ Նորան՝ Յիսուս Քրիստոսին, և նայենք՝ թէ ի՞նչպիսի խորին ճշմարիտ սպաւորութիւն գործում է Նա մեր հոգու վերայ:

Մենք բոլորեքեանս համաձայն ենք այն կէտում, թէ Նորա աւետարանած բարոյական օրէնքն՝ աշխարհում երբ և իցէ քարոզուած բարոյական օրէնքներին ամենահոգևորն է և ամենասուրբը: Նա դատում է ոչ միայն խօսքը կամ գործը, այլ և դատում է մինչև անգամ՝ զգայմունքը սորա ամենագաղանի խորքերում: Նորա դատաստանը մի անսպառ լոյս է, որ թափանցում է սրտի ամենահարին խորշերը: Նա տեսնում է սպանութիւնը ոչ միայն գործի, այլ և չարախնդրութեան ու անձնասիրութեան մէջ, որ թող է տալիս մեռնել նրան, որին կարող էր վրկել: Նա տեսնում է շնութիւն յաշարկոտ հայեացքի մէջ: Նա հրամայում է պահել այնպիսի սրբութիւն ու արդարութիւն, որոց գաղանի վկայն միմիայն Աստուած կարող է լինել: Նա պահանջում է՝ ոչ միայն չարի խառնախել, այլ և բարի առնել, և այն էլ ոչ թէ միայն սորա արտաքին գործողութիւնն, այլ և ներքին էութեան սրբայութիւնը: Մի խօսքով՝ Նա պահանջում է անպայման հնազանդութիւն երկու պատուէրներին՝ Սիրիք քո Աստուծուն քո գոյութեան բոլոր զօրութիւններով, սիրիք քո ընկերին՝ ինչպէս քո անձը: Նա պատուիրում է մարդկանց՝ յեղէք կատարեալ ինչպէս ձեր երկնաւոր Հայրը կատարեալ է»:

Ես ինզրում եմ իմ ունկնդիրներին կատարեալ անկեղծութեան ջանքով գառնալ գէպի իրանց սիրտը: Աւղիղ չէ՞ արդեօք, որ դուք ընդունում էք թէ՛ Քրիստոսի պատուիրած օրէնքը ամենաճշմարիտն է: Ձեր խիղճը տեսնելով այդ օրէնքը բաբախում է վերին քաջալերութեան զգայմունքով: Գուք հասկանում էք, որ երբ Աստուած

յայտնեց մարդոց սոցա կոչմանն օրէնքն, անպատճառ նա այդպէս խօսելու էր: Եթէ ես այս ամբիոնի բարձրութիւնից թեթեւցնէի այդ օրէնքը և ձեր գատատաանին նրան յանձնէի, եթէ ես ասէի ձեզ թէ՛ Աստուած կը բաւականանայ կիսասրբութեամբ ևս՝ — միմիայն արտաքին ազնուութեամբ՝ համեմատ կենցաղաւարական սովորական կարգին, այն սիրով և անձնազօհութեամբ, որոց չափը մեր անձնասիրութիւնն է որոշում: Եթէ ես ձեզ ասէի թէ՛, Նրան կարելի է գոհացնել աշխարհային բարոյականով և արտաքին առաքինութիւններով, որոնք շրջող կեղծ գրամի գին ունին — անկասկած կը մտածէիք թէ՛ այդպէս թեթեւցնելով բարոյականի պահանջները՝ քարոզիչը թեթեւ ժողովրդականութիւն կը վաստկի, սակայն դուք այդ բանը կընդունէիք ներքին արհամարհանքով և ամենահուռի մարդիկ անգամ համաձայնելով ձեզ հետ այս կէտում, կասէին, թէ ես գրծբում եմ իմ իրաւասութիւնը, իմ կոչման լիազօրութիւնը:

Ս՛ն տատանմունքը: Մեր խղճի համար խսկապէս հարկաւոր է այնպիսի հոգևոր և սուրբ օրէնք, որպիսին քարազում է Յիսուս Քրիստոսը: Բայց և այնպէս՝ մեղանից ո՛վ կատարեց այդ օրէնքը: Ո՞վ կարող է նրան կատարել: Ո՞վ այս ժողովում անմեղ է, չեմ ասում՝ գործերում, այլ և իւր սրտի խորհուրդների մէջ: Եւ հէնց ՚եր առնենք մեր գործերը: Ո՞վ կը ցանկայ, որ գրանք յայտնուէին ՚երջին գատատաանի օրը: Ո՞վ երբեմն չէ սոսկացել տեսնելով թէ՛ որքան ապականութիւն, նենգութիւն, չարութիւն, բարկութիւն և քծնութիւն բովանդակել և ծածկել կարող է իւր մէջ մի սիրա: Ո՛հ, մենք Փարիսեցիքս, որ բարձրագլուխ ձեմում ենք մեր ընկերների առաջ և ընդունում ենք նոցա գովեստները, հարցրել ենք մի անգամ մենք մեզ թէ՛ ինչի՞ նման կը լինէինք, եթէ մեր գաղանի կեանքը մի անգամ լոյս տեսնէր մեր ընկերների առաջ և եթէ նրանք մեզ գատէին այն կանոններով, որ մենք հանապազօր քարոզում ենք: Ահա՛ թէ ինչ բան ՚շտահար սրտով խոստովանում են այն մարդիկ, որոնք չեն կամենում ոչ գայթակղել իրանց անձով և ոչ էլ դժբել կատարելութեան օրէնքին: Եւ այսպիսիք ամենապաւերն են, որոնք կը վկայեն այս ճշմարտութեան սոյն ժողովի մէջ: Այն ինչ նանրասէր և յուռի կրքերին ծառայ գարչած հոգիները դուրս կը գան այստեղից ասե-

լով թէ՛ մենք աւելադանցութիւն ենք անում: չարախօսում ենք մարդկային բնութեան վրայ՝—բայց դժբա առաջինը կը լինէին խղճի գաղանի դատաստանի առաջ իրանց անձը դատապարտողը: Միշտ այսպէս է եղած: Եթէ դուք կամենում էք գտնել ամենահաստատա վկայութիւն, սրտառուչ ու մարդկային թշուառութեան վրայ վշտաբեկ խոտտովանութիւն՝ հարկաւոր է հարցնել ընտրեալ հոգիներին այն հայեացքն, որ կարողութիւն է առել նրանց տեսնելու բարոյական կատարելութեան մարտը գագաթնակէտը, բայց է է անում նոցա առաջ և՛ անյատակ վիճն, որ բաժանում է սրանց նրանից: Հազարաւոր վիճաներից վեր առնենք Պօղոս առաքեալին՝ այդ սուրբ ու սիրող հոգիներից առաջաւորին: Ե՛նչպիսի խորին վշտի աղաղակ է լսուում նորա բերանից, երբ նա սքանչելի գծերով մեր առաջ մտքի օրէնքի ու մեղքի օրէնքի միջև պայթած մաքաւման նկարագիրն անելիս ասում է՝ «Ես թշուառ մարդ եմ: Ա՛յ կաղատէինձ այս մարմնուց»:

Այժմ զննենք այն երևոյթն, որի առաջ մենք կանգնեցինք: Ահա-ւասիկ մեր հանդէպ կանգնած է մի էակ, որ առանց ամենևին տատանելու, առանց ստուգելու ու երկմտելու՝ քարոզում է մարդկանց կատարելութեան օրէնքն, որը Նորա երևելուց յետոյ, այլ ևս մարդու խիղճը չէ կարողանում հերքել: Այդ էակը քարոզելով այս օրէնքը բացարձակապէս գիտակցութիւն ունի թէ՛ կատարում է ինքը իւր քարոզածը: Նա, որ զգալ է տալիս մարդուն իւր թշուառութիւնն, և դրդում է մինչև անգամ ամենաանդորր խիղճը, երբէք մեղքի գիտակցութիւն չէ ունեցել, երբէք նրա բերնից խղճահարութեան աղաղակ, ապաշաւութեան հառաչանք չէ դուրս եկել: Ոչ մի մինչև անգամ ամենատանկատ ալիք չէ ծածանել Նրա սուրբ խղճի մակերևոյթը: Նա համարում է իրան սուրբ, անապաման սուրբ և Նորա աշակերտներն, որոնք վկայ էին Նորա ներքին կեանքին՝ անուանել են Նորան սուրբ և արդար. Նորա պաշտօնավարութեան պատմութիւնները, որ թողել են մեզ նոքա, և որոնց պարզ, պարզամիտ և անարուեստ ոճն ակներև ցոյց տալիս, որ նոքա իրանց գրութեան ժամանակ չեն հետևած ամենևին մի որ և է կանխակալ ծրագրի՝—նոքա մեր առաջ պատկերայրել են մի այնպիսի կեանք:

որի մէջ կրիստիկայի թափանցիկ հայեացքը չէ կարողացել գտնել՝ չեմ ասում՝ յանցանք, այլ ոչ մի սխալ, ոչ մի տկարութիւն և ոչ մի քծնի գիծ: Այս անձի խոշոր գործողութիւններն, ամեն մի զգացմունքը և բոլոր մտքերն անընդհատ մարմնացումն են եղած սիրոյ ու սրբութեան գաղափարական օրէնքի: Այդ էակն ոչ միայն հաստատում է իւր կատարելութիւնն, այլ և իւր երևելից յետոյ համարում է իրան խղճի անսպասան իշխան: Նա կապում է և արձակում յետ է դարձնում մեղաւորներին՝ արդարացրած իւր ինքնակալ դատալծուով: Նա արդարացնում է կամ դատապարտում է: Ամեն հոգիք մի օր Նորա դատատանի առաջ պիտի ներկայանան և բաւական է Նորա մի խօսքն՝ «Ես չեմ ճանաչում», որ լսողները ընդ միշտ պիտի յաւիտենական երանութենից:

Ազդիղ չէ՞ արդեօք, որ Նա է ճշմարիտ Քրիստոսը և այն ոչ միայն Պօղոսի ու Յովհաննու Քրիստոսը, այլ և առաջին երեք աւետարանիչների,— ամենահաւատի և բոլորովին անվիճելի հաւաստիքների Քրիստոսը: Ինչի՞ նման է այս անձնաւորութեան առաջ ժխտող կրիստիկայի ենթադրած երխասարգ Գալիլիացին, որ իբր թէ ներքին տղնութեան միջոցաւ հասանում է ներքին խաղաղութեան, և աստուածային որդեգրութեան աղօթքով և զգացմամբ:

Եթէ Նա մարդ էր, թող ինձ ասեն թէ՛ ի՞նչպէս նա տիրել էր բարոյական աշխարհին, թող ինձ ցոյց տան հետքն այն ներքին մաքրաման, որ անպատճառ աջակցելու էր նրա մէջ կատարեալ սրբութեան վշտաբեր յղութեան: Թող ինձ մեկնեն դատաւորի ու իշխանի այս դիրքն, որ բոլոր մարդկանց մասին տալիս է գերագոյն վճիռ, որի կատարումը լինելու է յաւիտենականութեան մէջ: Տասն և ինն գար է, եղբարք, որ քրիստոնէական խիղճը վճռել է այս խնդիրն և Նա երբէք չի փոխիլ իւր վճիռը: Այդ խիղճը զգացել է, որ Նա ունի այնպիսի սրբութիւն ու հեղինակութիւն, որ կարող չէ երկրի ծնունդ լինել, այդ պատճառով նա ողջունել է յանձին Քրիստոսի իւր մարգարէին և թագաւորին:

Գ.

Երրորդ՝ Քրիստոսի արքայական կոչումը՝ որ ապշեցրեց մեզ Նորա
կրօնական ճշմարտութիւն յայտնելու և խիղճ գատելու եղանակի
մէջ, առաւել ևս զօրաւոր կողմից յայտնուումէ՛, երբ նայում եմ
այն տեղի վերայ, որ իւր համար պահանջում է նոցա սիրոյ և
կեանքի մէջ, որոնք գիմում են Նորա մօտ:

Պէտք է լիովին նշանակութիւն տալ այդ իրողութեան: Անկաս-
կած բոլորովին բնական է՝ որ Նա, որ պատուիրում է մարդոց «սի-
րեցէք զմիմեանս», պիտի կամենար, որ ինքն էլ սիրուէր: Սակայն
հարկաւոր է աւելի զգոյշ լինել: Մենք Յիսուս Քրիստոսի գպրոցի
մէջ երկու բան ենք սովորում: սիրել մարդուն և սիրել այն, որ
կրօնական լեզուով կոչուում է մարմնու ընկեցումն:

Ի՞նչպէս համաձայնեցնենք—այս երկու իրողութիւնքը: Ա՛յ, եղ-
բարք, դրանց միջև հակասութիւնը առ երեւոյթս է: Քրիստոնէու-
թիւնը կամենում էր մի կարգ հաստատել զգացմունքների մէջ:
Ինչպէս ամեն տեղ, այնպէս էլ սրտի աշխարհում Նա կամենում
էր հաստատել օրէնքի թագաւորութիւնը: Նա այդ կարգի մէջ որո-
շեց այն տեղն, որ Աստուծուն կը պատկանի և այն տեղն, որ մար-
դուն է յատուկ: Այս, սէրը պիտի շողկապէ բոլոր էակներին
միմեանց հետ, սակայն այդ պիտի լինի նրանց Աստուծու հետ կա-
պելով: Աստուած՝ —ասա այն միակ էակն, որ կարող է իշխել մեր
սիրոյն պա կատարեալ լրութեան մէջ: Մենք պարտաւոր ենք միւս
բոլոր էակներին բաժին հանել այդ սիրոյ մի մասը, և եթէ մի
մարդ իւր բոլոր սէրը մի այլ էակի նուիրէր՝ դա կը լինէր խան-
գարմունք ու կուսակաշտութիւն: Այդ պատճառով որքան աւելի
սուրբ է մի էակ, որքան աւելի բարձր կանգնած է արարածների
բարոյական կարգի մէջ, այնքան էլ նա աւելի երկիւղ է կրում, որ
մի գուցէ նրանց այնպիսի փառատարութիւն տայ, որ վայել է մի-
միայն Արարին: Նա խոնարհում է և յետ է քաշուում աղաղա-
կելով «Ա՛յ ինձ, ոչ ինձ, Տէր, այլ Քո անուան վայել է փառք»:
Այս կերպով իրագործուում է էակների այն բարոյական կարգը,
որ կանխատեսել էր Պիլթագորոսը, երբ ասում էր՝ թէ ներդաշնա-

կուժիւնը աիեգերքի օրէնքն է: Բանականութեան օրէնքի այս ան-
ասկէտին նայելով՝ Յիսուս Քրիստոսը աշխարհին պարգևեց մարգ-
կայնութեան օրէնքը:

Սակայն արարածների այս բարոյական կարգի մէջ Յիսուս Քրիս-
տոս ի՞նչ է պահանջում իւր համար: Ի՞նչ բանի իրաւախնդիր է
մարգկանց մէջ: Ես հարցնում եմ Աւետարանիչներին և սքա ինձ
պատասխանում են, թէ Յիսուս Քրիստոս պահանջում է, որ մենք
ընդունենք Նրան՝ որպէս գերագոյն սուարկայ բոլորապտուղ սիրոյ և
ամենախորին աղբիւր կեանքի: Նա իւր հրապարակական քարոզու-
թեանց առաջին խօսքերից յայտարարում է թէ՛ Նորա աշակերտնե-
րը պիտի հալածանք կրեն Նորան սիրելու պատճառաւ: Նա բաց է
անում իւր գործի և իւր անձի մեծութիւնը՝ գործադրելով իւր
զաասխարակութեան զիւրատար եղանակն, որի նպատակն ալ թէ
ճշմարտութիւններ ձևարանելն է, այլ սրտի մէջ զգացմունք և ըմբ-
նոցութիւն արծարծելը: Այդ ճանապարհով Նա աստիճանաբար աշա-
կերտներին պատրաստում է ճանաչելու՝ թէ ով է Ինքը: Միմիայն
տարի ու կէս վարդապետական գործունէութիւնից յետոյ Նա վճռա-
բար հարց է տալիս նրանց թէ՛ «Ի՞նչ էք կարծումս ո՞վ եմ ես», և երբ
լսում է Պետրոսի դաւանութիւնը իւր Աստուածութեան մասին,
յայանում է, թէ իւր եկեղեցին պիտի հաստատուի այդ խոստովա-
նութեան վերայ: Նա Ինքն ուղղութիւն տալիս է իւր աշակերտներին
հայեացքին, ուշադրութեան ու հաւատին: Նորա մօտ պիտի գան,
Նրան հաւատան, և Նրան սիրեն: Բոլոր զգացմունքները պիտի են-
թարկուին այս իշխող զգացման, մարմնի և արեան բոլոր կապերը
պիտի խզուին, և որպէս զի այս ճշմարտութիւնը ներմուծէ իւր
աշակերտների սրտի մէջ կենդանի զօրութեամբ՝ Նա մինչև անգամ
չէ կասում այն սպառնալիք չափազանցութեան առաջ, որ լսւում է
Նրա անսուտ խօսքերի մէջ. «Ո՞վ չէ կարող ասել իւր հօր և մօր-
նիվ չէ կարող ուրանալ իւր սեպհական անձը՝ նա կարող չէ իմ աշա-
կերտ լինել»:

Նաւ միաք արէք, որ ես միմիայն առաջ եմ բերում առաջին երեք
աւետարանիչների վկայութիւնը: Հապա ի՞նչ կը լինէր, եթէ ես վկայ
բերէի Յովհաննէսին, որ միւսներից աւելի խորասուզուել էր իւր Ու-

սուղի հոգու մէջ: Ի՞նչ կը լինէր, եթէ ես ժամանակ ունենայի ցոյց տալ ձեզ Պօղոս առաքեալին, որ Քրիստոսին նուիրել էր իւր սրտի բոլոր հաւատը, բոլոր բերկրութիւնը և բոլոր զգացմունքները:

Բայց Քրիստոս սէր աւետարանելով յայտնում է իրան՝ որպէս կեանքի աղբիւր: Եւ արգարե՛, Նորա անձնաւորութիւնից մինչև այժմ հասում է կեանքի ու սրբութեան մի անսպառ աղբիւր: Միտք արէք թէ ի՞նչ իմաստ պարունակուում է այն պարզ սուրբ խօսքերի մէջ, որով դառնում է Նա երկրիս ամեն վաստակեալներին թէ՛ «եկա՛ք առ իս», և այն խոստման մէջ, որ որքան վսեմ է, այնքան էլ գերմարդկային՝ թէ «Գուք կը գտնէք հոգու խաղաղութիւն»: Հէնց այս մտքով է, որ Նա կազմում է խորհրդաւոր ընթրիքի սուրբ սեղանը, հրաւիրելով ապագայ ժամանակի բոլոր հաւատացեալներին՝ ճաշակել Նորա բեկեալ մարմինն և խմել անսպական արիւնը, որ հեղուում է աշխարհի մեղքերի քաւութեան համար և այդ պատարագը նրանց համար հաւատոյ մշտնջենական առարկայ է դարձնում: Վերջապէս Նա այս իմաստով թողնելով իւր աշակերտներին՝ այն մեծ րօպէին, երբ աւարտելով իւր գործը, եթէ նա միայն մեծ մարդարէ էր, պէտք է յետ քաշուէր և նոցա հայեացքը դէպի Աստուած դարձնէր— Նա դառնում է դէպի նրանց ասելով այն խօսքերն, որոնք դարերի ընթացքում մխիթարում են հաւատացեալներին. «Ես ընդ ձեզ եմ՝ զամենայն աւուրս մինչև ի կատարած աշխարհի»:

(Նարո-Նախէւէ)

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ՔՐԻՍՏՈՆԷՍԱԿԱՆ ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹԻՒՆ

(Նարո-Նախէւ-Քիւն).

ԿՆՈՋ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ: Պասակի լուծումն մեր ժամանակ աւելի և աւելի յաճախ կրկնուում է, սորա հետ միասին քարոզուում է է նոր վարդապետութիւն կնոջ ազատութեան մասին, որ անշուշտ բովանդակում է իւր մէջ և այր մարդու ազատութեան խընդիրը: Այս նոր վարդապետութիւնը մասամբ երևան է գալիս «աղապ»